## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

## Ն Ա Խ Ա Գ Ա Հ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«14» ապրիլի 2025 թ. N 53-Ա

### ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐԴԻՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե ներկայացված «ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Կասեցնել «ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառի շինարարության իրականացման 1-ին դասի լիցենզիային կից «Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ» (ՔՊՆ-001152-04) ենթատեսակի ներդիրի գործողությունը: Կասեցման ժամկետ սահմանել 6 ամիս:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

14.04.2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ